022201.01.7 «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը

Պատմություն

2.1. ՈԱՇ-ի մակարդակ

Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ

2.2. Որակավորման աստիճան

Պատմության մագիստրոս

2.3. Կրեդիտների քանակը

120

3. Բուհ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

4. Ֆակուլտետ

Հումանիտար գիտությունների

5. Ամբիոն

Պատմության

6. Ուսուցման լեզու

Հայերեն

7. Ուսուցման ձևը

Առկա

8. Արտոնագրում

Արտոնագրված է ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից, մասնագիտության ծածկագիրն է՝ 022201. 01.7:

9. ԿԾ-ի մուտքի պայմաններ

«Պատմություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի կրթական աստիճան և հաջողությամբ հանձնած լինի ընդունելության քննություն:

10. Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

«Պատմություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում երկու տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 120 կրեդիտ է՝ տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ):

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.

I. Ընդհանուր դասընթացներ,
II. Մասնագիտական պարտադիր դասընթացներ
III. Կամընտրական դասընթացներ
IV. Գիտահետազոտական աշխատանք
4.1. Մագիստրոսական ծրագրի գիտական ղեկավարի սեմինար,
4.2. Գիտահետազոտական պրակտիկա,
4.3. Գիտահետազոտական աշխատանք մագիստրոսի թեզի թեմայով,

4.4. Մագիստրոսի թեզի ձևակերպում և պաշտպանություն:

11. Ծրագրի նպատակը

Ծրագիրը նպատակաուղղված է պատմության բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, գիտության, ինչպես նաև այլ բնագավառներում աշխատանքային գործունեության համար:

<u>Ծրագրի նպատակներն են՝</u>

✓ Ուսանողության շրջանում ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների ընկալման և վերլուծության կարողությունների ձևավորում,

✓ պատմական իրադարձություններն ու երևույթներն ուսումնասիրելու, դրանց նկատմամբ սեփական կարծիք արտահայտելու, պատմական փաստերը համադրելու, վերլուծելու և համակողմանիորեն գնահատելու կարողության ձևավորում,

✓ ինքնուրույն գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորում, պատմության բնագավառում ինքնուրույն հետազոտություն կատարելու կարողությունների ձևավորում,

✓ ուսանողների մոտ բուն մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաների ձևավորում և զարգացում՝ ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլում կրթությունը շարունակելու համար,

✓ պատմության դասավանդման դասարանական և արտադասարանական աշխատանքների կազմակերպման կարողությունների ձևավորում:

12 . Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Գիտելիք և իմացություն

1. արդի միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղղությունների և առաջնահերթությունների իմացություն,

2. Մերձավորարևելյան տարածաշրջանի հիմնական հիմնախնդիրների, տարածաշրջանային հակամարտությունների վերաբերյալ գիտելիքներ,

3. Հայ գաղթօջախների առաջացման նախադրյալների, Հայկական Սփյուռքի ձևավորման, հայապահպանության գործում Սփյուռքի կազմակերպությունների ունեցած դերի իմացություն,

4. Հին հունական մշակույթի սկզբնավորման, ձևավորման և զարգացման օրինաչափությունների, Վերածննդի դարաշրջանի մշակույթի առանձնահատկությունների իմացություն,

5. ԽՍՀՄ կազմավորման, ԽՍՀՄ յոթ առաջնորդների գործունեության, ԽՍՀՄ փլուզման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների իմացություն,

6. Ժամանակակից միջազգային քաղաքական կազմակերպությունների, միջազգային կնճռոտ հարցերի և դրանց խաղաղ կարգավորման գործում նրանց ունեցած դերի վերաբերյալ գիտելիքներ,

7. 20-րդ դարի կարևորագույն իրադարձությունների, համաշխարհային պատմության ընթացքի վրա հետք թողած XX դարի ականավոր քաղաքական գործիչների գործունեության իմացություն,

8. Համաշխարհային պատմության մեջ գաղտնի ընկերությունների գործունեության, եվրոպական և ամերիկյան հեղափոխություններում, աշխարհաքաղաքական կարևորագույն իրադարձություններում նրանց ունեցած դերի վերաբերյալ գիտելիքներ,

9. Գունավոր հեղափոխությունների ընդհանուր գծերի, մեխանիզմների, խորհրդանիշների, գունավոր հեղափոխությունների ժամանակ արտաքին գործոնների դերի իմացություն,

10. պատմության և հարակից ոլորտների ժամանակակից ձեռքբերումների և նվաճումների, տեսությունների և մեթոդների իմացություն, որը թույլ է տալիս նախագծել և իրականացնել մագիստրոսի մակարդակին համապատասխան պատմագիտական և միջգիտակարգային ինքնուրույն հետազոտություններ,

11. պատմության հեռանկարում խոշոր անհատականությունների և հասարակական խմբերի դերակատարության վերաբերյալ ընդլայնված և խորը գիտելիքներ ու իմացություն:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Պատմական դարակազմիկ իրադարձությունների ու երևույթների մեկնաբանման, դրանց նկատմամբ սեփական կարծիք արտահայտելու, պատմական փաստերը համադրելու, համեմատելու, վերլուծելու և երևույթները համակողմանիորեն գնահատելու կարողություն,

2. Պատմական հիմնախնդիրը տարբեր տեսանկյուններից դիտարկելու, դրա լուծման հնարավոր եղանակներն ուսումնասիրելու ու լուծումներ գտնելու կարողություն,

3. Պատճառահետևանքային կապերի վերհանման միջոցով պատմական գործընթացների ընթացքը կանխորոշելու կարողություն, պատմական զարգացումները և աշխարհաքաղաքական իրադրությունը վերլուծելու ունակություն,

4. Պատմության ուսումնասիրության ընթացում նորագույն մեթոդների, հնարների, տեխնոլոգիաների կիրառման ունակություն, անկախ հետազոտության մեթոդներին

տիրապետման հմտություններ, հետազոտության արդյունքների մեկնաբանման կարողություն,

5. Պատմամշակութային գործընթացի, հասարակական առաջադիմության հիմնախնդրի լուսաբանման գործում պատմության դասավանդման դերի ու նշանակության գիտակցում,

6. պատմության և հարակից գիտակարգերի ներկայացուցիչների համար գործնական պարապմունքներ կազմակերպելու կարողություն՝ բացատրելու անցյալի և ներկայի պատմական իրողություններն՝ ըստ տարբեր գիտակարգերի արդյունքների,

7. սկզբնաղբյուրների ու մասնագիտական գրականության մշակման և ստացված արդյունքների վերլուծության ու ընդհանրացման մեթոդաբանություն կիրառելու կարողություն,

8. պատմության խնդիրների ուսումնասիրման արդիական մեթոդների, գիտահետազոտական և գիտամանկավարժական տարասեռ մոտեցումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ մշակելու կարողություն,

9. հետազոտության արդյունքների մշակման, գիտական ակնարկների, ռեֆերատների, հաշվետվությունների և ելույթների ձևակերպման եղանակները գործնականում կիրառելու, գիտական հոդվածներ գրելու և հրապարակելու (նաև առնվազն մեկ օտար լեզվով) կարողություն,

10. մասնագիտական հաջող գործունեություն իրականացնելու կարողություն:

Գ. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ

1. մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին հետամուտ՝ մասնագիտական հաղորդակցման միջոցները կիրառելու կարողություն ՝ ազգային և միջազգային մակարդակներում մասնագիտական և ոչ մասնագիտական լսարանի հետ հաղորդակցվելու և հետազոտության արդյունքներն ուեզրակացությունները ներկայացնելու և հիմնավորելու նպատակով,

2. մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվելու, արդյունավետ բանակցելու, մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը գիտահետազոտական և մանկավարժական խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները, ուղիներները և նպատակները ներկայացնելու և բացատրելու կարողություն,

3. նոր և բարդ խնդիրների լուծման և համապատասխան ոլորտում հետազոտությունների իրականացման համար տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ կիրառելու կարողություն,

4. մարդկային ռեսուրսների կառավարման և պլանավորման գործընթացները կազմակերպելու կարողություն ։

5. մասնագիտական և/կամ միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալների խորը վերլուծություն և գնահատում իրականացնելու կարողություն՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու նպատակով:

Դ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

1. Թիմային աշխատանքի, անհատների և խմբերի հետ հաղորդակցվելու, միջանձնային դրական հարաբերություններ ստեղծելու, փոխըմբռնում դրսևորելու և մարդկանց հետ համագործակցելու կարողություն,

2. Փաստերը վերլուծելու և սինթեզելու, յուրացված գիտելիքները տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու, գործնականում կիրառելու կարողություն, նոր տեղեկատվությունը ընկալելու և ճիշտ մեկնաբանելու կարողություն,

3. Առարկայական ոլորտում ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու կարողություն,

4. Սեփական գործի կարևորությունը գիտակցելու, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորելու, սեփական հետազոտության արդյունքները մեկնաբանելու, ձեռք բերած գիտելիքները ստեղծագործաբար օգտագործելու կարողություն,

5. Սովորողների իմացական ակտիվության, ստեղծագործական կարողությունների զարգացման կարողություն,

6. մասնագիտական գործունեության ընթացքում տարբեր ոլորտներից ստացած մեծածավալ տվյալների (որակական և քանակական) համադրմամբ նոր գաղափարներ առաջադրելու, պատմագիտական հետազոտությունների շարունակական բարելավումը ապահովելու կարողություն,

7. պատմության և հարակից գիտակարգերի հնարավոր փոխազդեցությունները ընկալելու և դրանք պատմագիտական աշխատանքներ պլանավորելու, նախագծելու և իրականացնելու ժամանակ հաշվի առնելու ունակություն,

8. պատմագիտական նոր հայեցակարգերը, տեսություններն ու մեթոդները հետազոտելու, ձևակերպելու և հիմնավորելու, ոլորտի տեսական կամ գործնական խնդիրների լուծման նորարարական և ստեղծագործական մոտեցումներ առաջադրելու կարողություն,

9. տեղական և համաշխարհային պատմամշակութային գործընթացների ըմբռնման հարցում պատմության դասավանդման դերն ու նշանակությունը, սեփական գործի

կարևորությունը ընկալելու և դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորելու ունակություն,

Ե. Ինքնուրույնություն և պատասխանատվություն

1. պատմության ոլորտի առաջանցիկ խնդիրների և գործընթացների հետազոտությունը համակարգելու ունակություն՝ նոր գիտական գիտելիքի ստեղծման նպատակով,

2. թիմային աշխատանքները ինքնուրույն կառավարելու և թիմում այլոց աշխատանքի համար մասնագիտական պատասխանատվություն ստանձնելու կարողություն,

3. տեքստերն ու փաստաթղթերը՝ ըստ մասնագիտության սկզբունքների մեկնաբանելու, ծանոթագրելու և խմբագրելու կարողություն,

4. իր գործունեությամբ ազգային արժեհամակարգի, պատմամշակութային փորձի և համամարդկային արժեքների տարածմանը նպաստելու կարողություն,

5. իր կրթական կարիքները ինքնուրույն բացահայտելու ունակություն՝ գիտելիքի իմաստավորված կիրառությունը և ինքնազարգացումը խթանելու համար, իր հմտությունների ու կարողությունների շարունակական զարգացումը պլանավորելու կարողություն։

Կոմպետենցիաների կազմը

«Պատմություն» մասնագիտությամբ մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

<u>1. Ընդհանրական կոմպետենցիաներ (ԸԿ).</u>

1. տիրապետի առարկայական ոլորտին, իմանա հետազոտության նորագույն մեթոդները, հնարները, տեխնոլոգիաները
2. ընկալի նոր տեղեկատվությունը և կարողանա այն մեկնաբանել
3. գիտենա համաշխարհային պատմության նորագույն տեսությունները և դրանց մեկնաբանությունները
4. ցուցաբերի ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում առարկայական ոլորտում
5. ունակ լինի վերլուծելու և սինթեզելու փաստերը
6. կարողանա մեկնաբանել, համեմատել, քննարկել պատմական դարակազմիկ իրադարձություններն ու երևույթները, ունակ լինի դրանց նկատմամբ արտահայտել սեփական կարծիք
7. կարողանա հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակներն ու գտնել լուծումներ

8. կարողանա իրականացնել արդյունավետ կրթական գործունեություն՝ դասավանդման ժամանակակից մեթոդների ընտրությամբ

2.Բուն մասնագիտական կոմպետենցիաներ (ԲՄԿ)

1. ունենա համակարգված և կայուն մասնագիտական գիտելիքներ
2. տիրապետի անկախ հետազոտության մեթոդներին, կարողանա մեկնաբանել հետազոտության արդյունքը
3. ամբողջական պատկերացում ունենա արդի համաշխարհային քաղաքական զարգացումների և պատմական գործընթացների մասին
4. կարողանա համադրել, վերլուծել պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները
5. կարողանա ինքնուրույն ներդրում կատարել մասնագիտական ոլորտում՝ մագիստրոսական ատենախոսության տեսքով
6. գիտակցի սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորի, կարողանա մեկնաբանել սեփական հետազոտության արդյունքները
7. կարողանա ստեղծագործաբար օգտագործել ձեռք բերած գիտելիքները
8. քննադատորեն մոտենա և իմաստավորի համաշխարհային պատմության տեսության և պրակտիկայի զարգացմանը:

13. Ուսումական աշխատանքի տեսակներն են.

- ✓ դասախոսություններ
- ✓ սեմինարներ, գործնական պարապմունքներ,
- ✓ ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, կոնկրետ իրավիճակների վերլուծություն, դերային գործնական խաղեր, կլոր սեղան, զեկույց),
- ✓ գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկա,
- ✓ մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն:

14. Դասավանդման մեթոդներ

✓ դասախոսություն, թեմատիկ սեմինար, սեմինար-բանավեճ, անհատական գործնական աշխատանք, խմբային գործնական աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր, գործնական ուսուցման տիպային դաս, թվային ուսուցում, տեսանյութերի դիտում և քննարկումներ, ուսումնական այցելություն:

15. Ուսումնառության մեթոդներ.

✓ Դասագրքերի և սկզբնաղբյուրների ուսումնասիրություն, թիմային քննարկում, կոնկրետ իրավիճակի կամ իրադրության վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, նպատակին

ինքնուրույն հասնելու ճանապարհների փնտրման հանձնարարություններ, փորձագիտական խաղեր, վարժություններ, գիտելիքները գործնականորեն կիրառելու ինքնուրույն աշխատանքներ:

16. Գնահատում

ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:

Բակալավրիատի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:

Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.

- ✓ ինքնուրույն կատարվող աշխատանքներ,
- ✓ գործնական (սեմինար) աշխատանքներին ուսանողի մասնակցություն, նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները,
- ✓ անհատական պլանով նախատեսած մագիստրոսական ավարտական աշխատանքի թեմայով գիտահետազոտական աշխատանքի կատարման արդյունքների գնահատում,
- ✓ ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:

17. Մասնագիտական գործունեության ոլորտներ

«Պատմություն» մասնագիտությամբ մագիստրոսը անմիջապես բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել.

- ✓ տարբեր տիպի ուսումնական հաստատություններում՝ որպես պատմության ուսուցիչ,
- ✓ պատմական ուղղվածություն ունեցող գիտահետազոտական ինստիտուտներում, արխիվային հիմնարկություններում՝ որպես աշխատակից
- ✓ միջազգային կազմակերպություններում, Պաշտպանության, Արտաքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններում, թանգարաններում, հասարակական կազմակերպություններում, լրատվական գործակալություններում :

18. Հետագա ուսման հնարավորությունները

«Պատմություն» մասնագիտությամբ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ է կրթությունը շարունակելու ասպիրանտուրայում՝ պատմական կամ հասարակական գիտությունների ոլորտում: